

ՀԱՅԵՐԵՆ ԵՂԵՌՆ ԲԱՌԻ ԾԱԳՈՒՄԸ ԵՎ
ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բանասիր. գիտ. դոկտոր Վ. Գ. ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ

Հայերենի *եղեռն* բառի ծագման և տիպաբանության հարցը ենթադրում է բառային միավորների ավելի լայն քննարկում, քան կարելի է կարծել առաջին հայացքից:

Եղեռն բառը «Նոր հայկազյան բառարանում» բացատրվում է «չարիք, վտանգ, ոճիր, աղետք, պատահար, վնաս», գործածված ոչ միայն Սուրբ գրքում, այլև Եզնիկի, Ոսկեբերանի, Եվսեբեոսի և այլոց կողմից¹: Սուրբ գրքում բառը ուղիղ ձևով կիրառվում է երկու անգամ «Եւ ոչ ծանեաւ զլինելոց *եղեռն* իւր, ասէ Տէր, որ գանձէին անօրէնութիւն եւ թշուառութիւն ի գաւառս իւրեանց» [= Նրանք չիմացան իրենց պատահելիք *եղեռնը*, - ասում է Տէրը, - քանի որ նրանք անօրէնութիւն եւ թշուառութիւն էին գանձում իրենց գաւառներում] (Ամովս, 3, 10)², «*Եղեռն* վնասու քաղաքացւոցն իւրոց կացուցանէր» (Բ Մակ., 4, 20), իսկ *եղեռնաւոր* ձևով երեք. «Փղապետն... յանկարծ.... *Յեղեռնաւոր* պատուհասեն» (Գ Մակ., 5, 19), «գոնէ արդ՝ առ վաղիւ պատրաստեցես *յեղեռնաւոր*» (Գ Մակ., 5, 21), «Զի հրամայեցաւ ... ուր համարեցան *զեղեռնաւոր*» (Գ. Մակ., 6, 21):

Երեմիա Մեղրեցու բառարանում հանդիպում են հետևյալ բառերը՝ իրենց սեղմ բացատրությամբ. *եղեռն* «չար, դառն», *եղեռնագործ* «չարագործ», *եղերական* «լալական», *եղերամայր* «ծողով լալեաց, ձայնարկուաց, կոռույ», *եղերերգու* «լալական երգ»³:

Աճառյանը, ի տարբերություն «Նոր հայկազյան բառարանի»

¹ Գ.Աւետիքեան, Խ.Սիրմէլեան, Մ.Աւգերեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի. հ. 1, Վենետիկ, 1836, էջ 154:

² Նոր գրական հայերեն թարգմանությունը՝ «Աստուածաշունչ մատեան Հին եւ Նոր Կտակարանների, արեւելահայերեն նոր թարգմանութիւն», հրատ. Աստուածաշնչային ընկերութեան, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1994, էջ 1093 (թարգմ. Ե. Կ. Մելքոնեան):

³ «Բառգիրք հայոց», քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Մ. Ամալյանի, Ե., 1975, էջ 86:

հեղինակների, *եղեն* բառից է կազմված դիտում միայն *եղենաւոր*, *եղենագործ*, *եղենական*, *եղենահամ* «դառնահամ» և (նոր գրականում) *եղենադատ* բառերը՝ մերժելով նախորդների այն մոտեցումը, թե հայ. *եղեր* «ողբ» բառը ևս առնչվում է *եղեն* բառին (այդպես են վարվել ոչ միայն «Նոր հայկագյանի» հեղինակները, այլև հավանաբար վերջիններիս հետևելով, անվանի հայագետներ Լազարյը, Բուզեն և այլք), որ և հարցի մանրամասն քննության տեղիք է տալիս: Եվ այդպես էլ Աճառյանը չի տալիս *եղեն* բառի որևէ ստուգաբանություն: Բառի ստուգաբանությունը կատարվում է ավելի ուշ:

Ավանդական համեմատական լեզվաբանության մեջ այս բառի և հարակից այլ բառերի համար առանձնացվում է հնդեվրոպական (հե.) այնպիսի հավանական արմատ, որ ցեղակից լեզուներում հանդես է գալիս շուրջ մեկ տասնյակ համանունային տարբերակներով:

Վերջին կարգի տարբերակների մասին ընդունելի բնութագրություն է տալիս Գ. Ջահուկյանը. «Ինչպես հայտնի է, համանությունները բազմիմաստության սահմանն է. բազմիմաստության զարգացումը բառիմաստի տարբեր առումների հեռացումը հանգեցնում է համանունների առաջացման: Համանունության մյուս աղբյուրը փոխառություններն են, որոնք, մուտք գործելով լեզվի մեջ, կարող են արդեն եղած բառերի հետ համանուններ կազմել: Արդի վիճակում մենք առայժմ կարող ենք հավաստիորեն խոսել միայն ստաջին տիպի համանունների մասին, այն էլ նկատի առնելով գերազանցապես արմատական իմաստները: Յ.Պոկոռնու բառարանում համանուն արմատները մեծ թիվ են կազմում. Երբեմն առկա են մեկ տասնյակից ավելի արմատային համանուններ»⁴: Եվ ըստ այսմ էլ՝ բերվում են հայերենում իրենց տարբերակային արտացոլումն ունեցող, իրոք, մեկ տասնյակից ավելի արմատներ՝ իբրև համանունային տարբերակներ, որոնցում չկա հե. *el- արմատի տարբերակումը: Սակայն վերջինս գտնում ենք հեղինակի բառային գուգաբանությունների ցանկում. հայերենի համար *el- համանուն արմատները խմբավորված են 8 «տարբեր իմաստային խմբերի մեջ», որոնցից 5-րդը ներկայանում է հետևյալ տեսքով. ընդհանուր հե.

⁴ Գ. Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 53:

*el-, որ հայերենի համար հանդես է գալիս այս կամ այն տարատեսակով կապված պարզ կամ ածանցական ձևով, ձայնդարձի լրիվ կամ զրո աստիճանով.

1) *el- > հայ. *եղեն* «չարիք, փորձանք, ոճիր»,

2) *el-g' - (?) > հայ. *եղծ* «տձև, անշուք, խանգարված», *եղծանեմ* «ավերել, փչացնել, ջնջել, ապականել, քանդել»,

3) *ol- > հայ. *ողորմ* «գուր, կարեկցություն»,

4) *l- > հայ. *աղ-լտ* (?) «գուր, (սրտի) ցավ, վիշտ, փորձանք, աղետ»,

5) *l-no (?) > հայ. *աղն* «աղետ, եղեն», *աղունք* (նույնը),

6) *l-gi- (?) - > հայ. *աղճատ* (?) «ավերված, աղճատված»⁵:

Ինչպես նկատում ենք, թե՛ հե. արմատի վերականգնման և թե՛ հայերենում արտացոլման որոշ դեպքերում կա թեականություն (նշվում է հարցականով): Սրանցից *եղծ* (*եղծանեմ*), *աղետ*, *աղն* (*աղունք*) և *աղճատ* բառ(արմատն)երի ստուգաբանությունը նորություն է, այսինքն՝ հայերենի արմատաբանությանը հայտնի է Աճառյանի բառարանից հետո, իսկ *ողորմ*-ը Աճառյանը, ոչ անկախ Մեյեից, ծագած է համարում հե. *orm- արմատից (հմմտ. գերմ. arms «թշվառ» և հիսլ. armr, aumr «դժբախտ, ողորմելի» և այլն), որ չեն ընդունում հետագա ուսումնասիրողները⁶:

Միաժամանակ «Հայոց լեզվի պատմություն» աշխատության մեջ (ինչպես նաև՝ «Опыт семантической классификации»-ում) նշվում է, որ հե. *el- արմատից ծագող ձևեր ունեն ցեղակից լեզուներից միայն խեթական և կելտական լեզուները, իսկ իտալյան լեզուների ձևերը նշվում են հարցականով:

Այն հարցը, թե դրանք, իբրև բազմիմաստությունից համանություն անցման տարբերակներ, որքանով են ամբողջանում մեկ ընդհանուր իմաստի մեջ, քննության առարկա չի դառնում, թեկուզ պատմական շրջանի արմատաբանության տեսության լույսի տակ:

Գ. Ջահուկյանը «Հին հայերենի վերջածանցների ծագումը» հոդվածում -*առն*, -*ենն*, -*իռն*, -*ոռն* և -*ուռն* վերջնահանգ մասնիկ-

⁵ Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 121: Հմմտ. Г.Б. Джаукян, Опыт семантической классификации и ареального распределения индоевропейской лексики армянского языка // Г.Б. Джаукян, Л. А. Сараджева, Ц.Р. Арутюнян, Очерки по сравнительной лексикологии армянского языка, Ереван, 1983, с. 62:

⁶ Հ. Աճառեան, Հայերեն արմատական բառարան, հ. 3, Ե., 1977, էջ 556: Հմմտ. Գ. Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, էջ 164:

ներից ոչ մեկին չի անդրադառնում⁷:

Իսկ եթե ենթադրելու լինենք, ապա կարելի է ասել, որ դրանք հավանաբար չեն դիտվում որպես այդպիսիք, մանավանդ նախագրային հայերենի բառակազմության մեջ: Սակայն նման վերջնահանգ մասնիկներով (վերջածանցներով), կամ թեկուզ այդպիսին համարելի բաղադրությամբ բառերը հայերենում զգալի թիվ են կազմում (ըստ Գ. Ջահուկյանի տվյալների՝ 75 միավոր):

Դրանցից - *ենն* վերջնահանգով կա շուրջ երկուսուկես տասնյակ բառ (24 միավոր), և դարձյալ ըստ Ջահուկյանի բառարանի տվյալների՝

ա) 11-ը բնիկ է. *բենն* [< հե. *bher-no (bher-) «բերել, տանել»], *եղենն* (հե. *el- «ոչնչացնել, վնասել»), *ընթենուն* (< հե. *ter- «բարձրաձայն խոսել»), *թիթենն* (< հե. *pter-), *կեննեխ* (< հե. *ger-), *ձենն* [< հե. *g'hes(o)r- «ձեռք»], *ձմենն* (< *g'heimerinos- «ձմեռ»), *ջենուն* (< հե. *guher-nu (*guher-) «տաք. ջերմ»), *սենն* (< հե. *k'er-no- (*k'er-) «աճել, աճեցնել, սնել»), *սիսենն* (< հե. *k'eik'eron- (*k'ik'er), *ցեն(ն)* [< հե. *skern-no (sker-) «կղկղել»],

բ) 4-ը՝ եկամուտ (փոխառյալ)՝ *կիստենն* «ավազան, ցիստենն» (հուն. κιστέριον), *ներն* (հուն. Νέρων < լատ. Nero, -nis. կայսրի անուն), *սենն* «սոնի, առանցք» [արամ. sarnā (seren)], *տաբեննի* «խանութ, կրպակ, պանդոկ» (հուն. Ταβέρνα < լատ. taberna), 1-ը՝ բնաձայն՝ *ճիճոունք* «ճովողյուն»,

գ) 8-ը՝ անհայտ ծագման՝ *բնդենն* «մի սև բզեզ>>, *ենձենն* «նենգ, խարդախ» [նաև՝ *ենձեն* «սպառազեն» (?)], *թեն(ն)* «բրդե թել», *լիսենն* «սրունքոսկր, առանցք», *կոզ(ե)ոն* «անչափահաս, մանուկ», *կոզ(ե)ոն* «ուղտի ձագ», *տենն* «?» (հարցականով)⁸, *տիտենն* «կոկորդիլոս»:

Նման քննարկումը, չհաշված մեկ-երկու դեպքերի, կատարված է ավանդական համեմատաբանության տվյալների հիման վրա, մասնավորապես Հյուբշմանի, Պոկոռնու, Աճառյանի հետևողությամբ:

Իսկ այժմ անդրադառնանք բուն խնդրին՝ *եղենն* բառին և նրան

⁷ Գ. Բ. Ջահուկյան, Հին հայերենի վերջածանցների ծագումը // «Պատմա-բանասիրական հանդես», 1994, 1-2, էջ 53-66, 1995, 1, էջ 37-50): *Նույնի*, Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010, էջ 792-814:

⁸ Գ. Ջահուկյանը «Հայերեն ստուգաբանական բառարան»-ում (էջ 727) գրում է. «Անստույգ բառ: Ծագումն անհայտ է »:

ծագումնաբանորեն (արտահայտության և բովանդակության պլաններում) այս կամ այն չափով առնչվող բառերին՝ կատարելով ինչ-ինչ ճշգրտումներ, թեական լինելու հետ կապված լրացուցիչ փաստարկումներ, ընդհանուր արմատին վերաբերող այլ լեզուների տվյալներով լրացումներ:

Է. Բ. Աղայանն անդրադարձել է հետևյալ բառերին. *աղունք* (եզակի թիվ՝ *աղն*) «աղետ, եղեոն» (հմմտ. *աղետ* // *աղետ* «փորձանք. պատուհաս»), *աղճատ* «խեղված, ոչնչացված», նաև *եղծ* «ոչնչացում, հերքում» (<հե. *el-//*ol- «փչացնել, ապականել. ոչնչացնել, կործանել»)⁹:

Ինչ վերաբերում է հայ. *եղար* (հետագայում՝ *եղեր*) «ողբ, լաց, կոծ», այլև *եղամայր* (*եղերամայր* և այլն) բառերին, առայժմ ձեռնպահ ենք մնում կարծիք հայտնելուց:

Ուշագրավ դիտարկում ունի Հ. Սուրբիասյանը. նախ՝ տարբերակներ են դիտվում *եղեր* և *եղար* արմատները՝ իբրև «ողբ, լաց, կոծ», ընդհանուր իմաստի կրողներ՝ հղելով *ողբ* բառին, այնուհետև՝ *եղծ* (որից՝ *զեղծ*, *զեղծարար*) արմատի համար նշվում են մի շարք իմաստներ՝ «տձև, անշուք, խանգարված, հերքումն, ապականումն, քանդելը, փչացնելը» < *el-g' - (հե. *el- / ol- / ʔ- «ոչնչացնել, փչացնել»), ընդ որում արմատական տարբերակներ են նշվում, աճականով՝ *աղճատել* (*-g-), առանց աճականի՝ *եղեոն/եղեր*, *աղն/աղունք* «աղետ, եղեոն» (բացատրության մեջ երկրորդ բառը վրիպակով «*եղեզն*» է - Վ. Հ.), *աղետ* / *աղետ*¹⁰: Նշվում են նաև ցեղակից լեզուների համեմատելի ձևեր. հուն. ἄλλομαι «փչացնել, ապականել», ἄλέχω «ոչնչացնել», հիոլ. olc «վատ», մբրետ. el-boet «քաղց», բրետ. ol-argant «անփողություն», ol-buid «սննդի պակասություն, սննդի կարիք», հրգերմ. ilki «քաղց», լիտվ. elgtis «մուրալ», egeĭta «աղքատ», ռուս. алкать «քաղցել, տենչալ»¹¹:

Այստեղ, *ողբ* բառի առումով նկատենք, որ հեղինակը մեկ քայլ առաջ է գնում, քանի որ այն համեմատության մեջ է դնում մյուս

⁹ Է. Բ. Աղայան, Բառաքնական և ստուգաբանական հետազոտություններ, Ե., 1974, էջ 17-18, 30-31, 153 և այլն: Հմմտ. Գ. Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, էջ 164: Վ. Գ. Համբարձումյան, Հայերենի բառաքնական և ստուգաբանական ուսումնասիրություններ, Ե., 2012, էջ 119:

¹⁰ Հ. Վ. Սուրբիասյան, Աճականը հայերենում, Ե., 1986, էջ 157: Տողատակին նշվում է. «*աղետ* բառի համար Է. Բ. Աղայանը վերականգնում է *olei-d նախաձևը, ուր *d > տ-ն աճական է (*Աղայան*, 1974, էջ 17-18)»:

¹¹ Հ. Վ. Սուրբիասյան, նշվ. աշխ., էջ 157-158:

ձևերի հետ, թեև իր նախորդներն այդպես չեն վարվել: Օրինակ՝ Ջահուկյանը, ոչ միայն *ողբ*, այլև *ողողանամ*-ի հետ կապված, գրում է հետևյալը. «*Ողբ*-ի համար Ջոլտան [Solta, 1960, 197]¹² նշում է նաև *el/*ol-ին զուգահեռ *ul- հնչարմատին (Schallwurzel) պատկանող լիտվ. ulbūoti «կանչել, երգել» բայը, որ ունի հայերենին համապատասխան շրթնային աճական», այնուհետև՝ «*Ողողանամ* բայի հետ միասին Աճառյանը [ՀԱԲ, 3², 555] հիշատակում է նաև բրբռ. Ուլուլալ «ողբալ» բայը, որ, սակայն, ունի այլ ձայնավորում և մեր կողմից հատկացվում է հ.-ե. *ul-- (կրկն.*ul-ul) արմատին («ճչալ, ոռնալ»)¹³:

Կարելի է ենթադրել, որ հայ. *եղուկ* «ավաղ, ափսոս. խեղճ, ողորմելի, թշվառ» բառի *եղ*- արմատը ևս համեմատելի է *եղեն*-ի հետ, մանավանդ եթե նկատի ենք ունենում նաև իմաստով մոտ լինելը: *Եղուկ*-ի վերաբերյալ ընդունված ստուգաբանությունը մերժում է Ջահուկյանը. «*եղուկ* «ավաղ, ափսոս. խեղճ, ողորմելի, թշվառ» բառի ստուգաբանությունը պատկանում է Շեֆտելովիցին [BB, 28, 308]¹⁴ և ընդունվում է Աճառյանի կողմից: Կասկածելի է *-ug-> -ուկ անցման պատճառով, թեև *leug- արմատը ունի նաև *leug- տարբերակը, բայց *-u-ից հետո հայերենում *g-ն նույնպես քմայնանում է և փոխվում -ծ-ի: Իմաստի համար հմտ. հինդկ. -ռայ «ցավ, հիվանդություն», հուն. λευαλογέος, λυγρός «ահավոր. տանջալի, վշտալի, խեղճ», լատ. lūgueō, -ēre «սգալ», lūgubris «վշտալի, սգալի»¹⁵: Մեջբերման երկրորդ մասում նշումը՝ իմաստային կողմի վերաբերյալ, բավականին հուսալի հիմք է *եղուկ*-ը դնելու *եղեն*-ի շարքում:

Գ. Ջահուկյանի «Հայոց լեզվի պատմություն» գրքի իմաստային (թեմատիկ) ցանկում հե. *el- արմատից բխեցրած *եղեն*, *եղծ* (*եղծանեմ*), *ողորմ*, *աղետ*, *աղն* (*աղունք*), *աղճատ* բառերին, բնականաբար, անդրադառնում է նաև «Ստուգաբանական բառարան»-ում, դրանց վերաբերյալ արվում են հետևյալ կարգի դիտարկումները (բերում ենք այստեղ առանձին-առանձին):

1) *Եղեն* «չարիք, փորձանք, ոճիր». թերևս բնիկ հնդեվրոպա-

¹² Իմա՝ G. R. Solta, Die Stellung des Armenischen im Kreize der indogermanischen Sprachen, Wien, 1960, էջ 197:

¹³ Գ. Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, էջ 164:

¹⁴ Իմա՝ G. Scheftelowitz, Zur altarmenischen Lautgeschichte // «A. Bezzenbergers Beiträge zur Kunde der indogermanischen Sprachen», 28, 1904 (ըստ Գ. Բ. Ջահուկյանի):

¹⁵ Գ. Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, էջ 178:

կան *el- «ոչնչացնել, վնասել» արմատից. հմմտ. հուն. ολλυμι, ολεκω «ոչնչացնել, կործանել», թերևս նաև խեթ. hullai «հաղթել, պարտության մատնել, ոչնչացնել»: -Pok. IEW 1, 306: Ավելի քիչ հավանական է կապը *եղար*, *եղեր* բառերի հետ¹⁶: Հմմտ. Եր. Մեղրեցի *եղենն* «չար, դառն», այլև *եղենագործ* «չարագործ», *եղերական* «լալական», *եղերամայր* «ժողով լալեաց, ձայնարկուաց, կռուոյ», *եղերերգու* «լալական երգ»¹⁷: Այստեղ երկու անգամ գործածվում է «թերևս»-ը, որ ճշանակում է, թե հեղինակը հարցի լուծումը չի համարում վերջնական: Նույնը նկատում ենք *եղծ*-ի ստուգաբանության դեպքում:

2) *Եղծ*. «խանգարված, ապականված, ավեր, տձև, անկերպարան, պակասավոր, վատ, շինծու, հերքում». «թերևս բնիկ հնդեվրոպական *el-g'- [*el-] «ոչնչացնել, փչացնել, ապականել» արմատից, որից թերևս *el-g- «խեղճ, աղքատ, պակասավոր», *el-k <<քաղցած, վատ». հմմտ. հուն. ολλυμι «կործանել, ոչնչացնել, սպանել, քանդել, հեռացնել», ολεκω «ոչնչացնել, կործանել», բրետ. ol, մբրետ. el «պակասություն, կարիք»: Իմաստային առումով հեռու է հ.-ե. selg- «արձակել, նետել, թափել» արմատը¹⁸:

3) *Ողորմ* «ողորմ, գուր». «բնիկ հնդեվրոպական *ol- [*el-] «ոչնչացնել, վնասել» արմատից, որից նաև *եղենն* (տե՛ս): Աճառյանը (ՀԱԲ 3, 556) համեմատում է գերմ. համիմաստ բառերի հետ՝ գորթ. arms, հոլ. arm, գերմ. arm «խեղճ, թշվառ», և վերականգնում է հայ.-գերմ. գուգաբանություն՝ հայերենի համար կրկնավոր տարնմանությամբ (**ողորմ* > *ողորմ*) զարգացում. սակայն Պոկոռնին (Pok., IEW 1, 782) գերմ. արմատը հատկացնում է *orbho- «որբ» արմատին (խիստ կասկածով *orbh-mo-)»¹⁹:

4) *Աղետ* «գուր, ցավ, վիշտ, չարիք, փորձանք». «բնիկ հնդեվրոպական, բայց բուն ձևի վերականգնումը դժվարություն է հարուցում. ամենից ավելի հավանական է բխեցնել հ.-ե. *oleid- ձևից՝ *lei- < *elei- «դադարել, փոքրանալ, անհայտանալ» արմատից. հմմտ. հիսլ. «քիչ, վատ» (այլև lei-t-), գ. leiden «հարդուրժել, տառապել: Джаяк-ян, ОИДПАЯ 150: Ավելի քիչ հավանական է համեմատությունը *ol- «ոչնչացնել, վնասել, փչացնել» արմատի ածանցյալների հետ. հմմտ.

¹⁶ Գ. Բ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 213:

¹⁷ «Բառգիրք հայոց», էջ 86:

¹⁸ Գ. Բ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 214:

¹⁹ Նույն տեղում, էջ 601:

հայ. *եղենն, ողբ*:- Աղայան, ԲՄՀ 17-18»²⁰:

5) *Աղն (աղունք)* «աղետ, եղենն». «բնիկ հնդեվրոպական *olen (?) [*el-] «ոչնչացնել, վնասել, փչացնել» արմատից. հմմտ. հայ. *եղծ, եղենն*, հուն. ολλυμι «ոչնչացնել, կործանել»:- Աղայան, ԲՄՀ 17-18»²¹:

6) *Աղճատ* «աղավաղված». «թերևս բնիկ հնդեվրոպական *lgio- [*el-] «ոչնչացնել, վնասել, փչացնել» արմատից. հմմտ. հայ. *եղծ, եղենն*. «ոչնչացնել. կործանել»: Աղայան, ԲՄՀ 17-18: Ջահ. ՀԼՊ 121»²²:

Նկատենք, որ մինչ այս (իր նախկին աշխատություններից մեկում) Ջահուկյանը հայ. *աղճատ*-ը հարցականով առնչում է *այլ, աղաւաղ* բառերին, ընդ որում համեմատությամբ «լիդ. *ալа* «ուրիշը», *alida*-d «փոփոխություն», այլն թերևս *alēl*. [o.] «փոփոխել(?)» բառերի²³:

Այնուհետև, կարծում ենք, որ հայ. *աղճատ*-ից թերևս կարելի է առանձնացնել *աղճ*- մասը, եթե այն դիտենք համեմատելի հայ. *աղշ*-/ *աղչ*-/ *աղջ* (իմա՝ *աղշկորել, աղչկորել, աղջկորել* «ստիպել, բռնադատել») տարբերակային արմատների հետ: Ջահուկյանը, օրինակ, նշված երեք բառի դեպքում նախ՝ համեմատում է խեթ. *alsant*- «կողոպտված, գերված, բռնված, բանտարկված», *als*- «կողոպտել (?), գերել(?), բռնել(?), բանտարգել (?)» ձևերի հետ, այնուհետև՝ գտնում է, որ «Անստույգ է: Խիստ կասկածելի է *աղշկորել*-ը *աղշկոր* և արմատների բաժանելը. ավելի հավանական է *-որ*-ը դիտել իբրև ածանց (հմմտ. *խառնշտորել, տրորել* և այլն)²⁴: Մտածում ենք, որ «խիստ կասկածելի» լինելը վերանում է, եթե նախ խեթական *alsant*-ից առանձնացնում ենք *-ant* բաղադրիչը, այնուհետև՝ չենք անտեսում խեթերեն և հայերեն ձևերի իմաստային ընդհանրությունը (եթե ոչ՝ զրեթե նույնական լինելը):

Իսկ տիպաբանական առումով համեմատելի են հնդեվրոպական և այլ տիպի (ուրարտերեն, կովկասյան և այլն) լեզուների ինչ-ինչ ձևեր.

1) հմմտ. հե. *el- / *ol- «քշել, շարժման մեջ դնել. շարժել, գնալ»

²⁰ Նույն տեղում, էջ 36:

²¹ Նույն տեղում, էջ 39:

²² Նույն տեղում, էջ 38:

²³ Գ. Բ. Ջահուկյան, Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Ե., 1970, էջ 143:

²⁴ Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 152: Հմմտ. J. Tischler, Hethitisches etymologisches Glossar, mit Beiträgen von G. Neumann und E. Neu, Teil I, Innsbruck, 1990, էջ 20:

- ուրարտ. ul- «գնալ. տանել (?). վարել(?)», -ul-ušt «առջևից գնալ(?), նախորդել (?)»²⁵.

2) հմմտ. հե. el- «քշել, շարժ(վ)ել, գնալ» - վրաց.- զան. wl- «գնալ» (այլն վրաց. wal- / wl-, մեգրել. ul-, ur, ճան. ul-), wlt «փախչել» և այլն²⁶:

Այսպիսով, արված ճշգրտումները և լրացումները, ցեղակից և ոչ ցեղակից լեզուների հետ համեմատությունները ավելի հավանական են դարձնում էղ- արմատի և նրանից բաղադրված բառերի ծագումը և տիպաբանությունը, և այն ըստ այդմ էլ պիտի ընդգրկվի տողերիս հեղինակի կողմից ներկայումս կազմվող հայոց լեզվի բառարանական և ստուգաբանական բառարանի մեջ:

В.Г.Амбарцумян. Происхождение и типология армянского слова *եղեռն* [eʎern] “геноцид”. Проблема этимологии и типологии армянского слова “геноцид” *եղեռն* [eʎern] предполагает более широкие обсуждения, чем это заметно на первый взгляд.

Армянский корень էղ-[eʎ-], как более точно этимологизировал Э. Агаян, происходит от и.-е. корня *el-, вариант которого является и.-е. корень *ol-. И.-е. такими вариативными корнями являются также арм. слова *եղծ* [eʎc] “искаженный, искривленный, разрушенный, деформированный, бесформенный, дефективный, плохой, подложный, опровержение”, ср. греч. ολλυμι “разрушать, уничтожать, убить, рушить, отдалить”, ολεω “разрушать, уничтожать”, брет. ol, ср. брет. el “отсутствие, потребность”, *լղորմ* [oʎorm] “милосердие, сострадание”, *աղէտ* [aʎet] “сострадание, горе, горесть, зло, беда”, *աղն* [aʎn] (*աղունք*) [aʎunkʰ] “бедствие, резня”, *աղճաւ* [aʎcat] “искаженный”.

А с точки зрения типологии сопоставимы некоторые формы неиндоевропейских языков (урартский, кавказский и т.д.): ср. и.-е. *el-/ *ol - “водить, двигать, переместить, уходить” – урарт. ul- “уходить, нести(?)”, -ul-ušt “идти спереди(?), предшествовать(?)”; и.-е. el - “гнать, двигать(ся), идти” – груз. зан. wl-, “идти” (также груз. wal -/wl-, мегрел. ul-, ур., чан. ul-), wl- “убежать” и т.д.

V.G. Hambardzumyan. Etymology and Typology of Armenian Word *եղեռն* [eʎern] “genocide”. The problem of the etymology and typology of the Armenian word *եղեռն* [eʎern] “genocide” presupposes wider discussions than it is supposed from the first sight.

The Armenian root էղ- [eʎ-], as is etymologized more precisely by E. Aghayan, is originated from IE root *el-, the variant of which is the root *ol-. Among that IE variative roots are Arm. *եղծ* . [eʎc] “distorted, twisted, ruined, misshapen, shapeless, lacking, bad”. cf. Grek. ολλυμι “destroy, kill, distract, remove”, ολεω “destroy, raze”, Bret. ol, MBret. el

²⁵ Г. Б. Джаукян, Взаимоотношение индоевропейских, хурритско-урартских и кавказских языков, Ереван, 1967, էջ 42: Հմմտ. М. Л. Хачикян, Хурритский и урартский языки, Ереван, 1985, էջ 108, 110, 176:

²⁶ Г. Б. Джаукян, Указ. соч., էջ 92:

“lack, need”, *nnnn* [olorm] “mercy, compassion”, *wn* [alēt] “compassion, grief, sorrow, evil, trouble”, *wn* [aln] (*wnn*) [alunk] “disaster, tragedy”, *wn* [alčat] “distorted” words.

And in terms of typology are comparable not Indo-European (Urantian, Caucasian languages) some forms: cf. IE *el- / *ol- “to drive, to move, to go” - Urart. ul- “to go, to carry, to drive”, -ul-ušt “go ahead, proceed”; IE el- “to drive, to/to be moved, to go” - Georg. Zan. wl- “to go” (also Georg. wal- / wl-, Megrel. ul-, ur, Chan. ul-), wlč “to escape” etc.